ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՍՏՂԱԶՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՏՆՕՐԵՆ՝ Զ. ՄԻՐԵԿԱՆՅԱՆ

ՈՒՍՈՒՑՉ՝ Կ. ԱՌՋՈՒՄԱՆՅԱՆ

«ԽՈՍՔ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ»

ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

(7-9-րդ դասարաններ)

(Տարեկան՝ 68 ժամ, շաբաթական 2 ժամ)

2023-2024 ուստարի

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

- **Բացատրագիր**

Հաշվի առնելով այն փաստը, որ հայկական դպրոցներում ուսուցման լեզուն գրական հայերենն է և լեզվական գրագիտությունը ձևավորվում է առավելապես դպրոցում, իսկ բարբառները իրենց ազդեցությունն են թողնում մարդու լեզվամտածողության վրա, անհրաժեշտություն առաջացավ նպաստել գրական արևելահայերենի զարգացմանը՝ ի նպաստ հաղորդակցական կարողությունների և հմտությունների: Հաճախ դասապատրաստման և դասի ներկայացման ժամանակ իրար են բախվում տարածքային հարուստ բարբառը և ոսկեղենիկ գրական հայերենը, և այս առումով, տարանջատման և ըստ անհրաժեշտության օգտագործման խնդիր է առաջանում աշակերտների մոտ՝ նրանց իսկ ցանկությամբ մեկնարկել նման նախագիծ: Ծրագրի նշված թեմաները բխում են ՀՊՉ-ի կարողունակություններից և նպատակ ունեն զարգացնելու դրանք:

- **Նպատակները**
  - Ներկայացնել գրական հայերենի հմայքը ցանկացած իրավիճակ ներկայացնելիս:
  - Ձևավորել և զարգացնել պատկերացումներ գրավոր և բանավոր խոսքի ճիշտ և գրագետ կառուցման մասին:
  - Նպաստել աշակերտների լեզվական հաղորդակցական կարողությունների զարգացմանը:
  - Արժևորել գրական հայերենը լեզվամտածողության զարգացման գործում:
- **Վերջնարդյունքները**
- Իմանալ գրական հայերենի օգտագործման բնագավառները:
- Կարողանալ ճիշտ և գրագետ կառուցել գրավոր և բանավոր խոսք:
- Կարողանալ, անհրաժեշտության դեպքում, բանավիճել, սեփական դիրքորոշումը ներկայացնել և հիմնավորել, դիտարկումներ անել՝ կապված խոսքի հետ:
- Հասկանալ կրթության բնագավառում արդի հայերենի տեղն ու դերը և նրա պահպանման անհրաժեշտությունը:

- **Բովանդակության**

Խոսքը արվեստների թագուհի

- Խոսքի մշակույթը որպես լեզվաբանության կարևոր բնագավառ:
- Գրավոր և բանավոր խոսք:

- Գրագետ խոսքի կարևորությունը և հաղորդակցական հմտությունների ձևավորման սկզբունքները:
- Լսելի և ազդեցիկ խոսք կառուցելու միջոցներ:
- Պարզ լուծումներ, երբ դժվարանում ես վերարտադրել նյութի գաղափարը:

Դիտում համր ֆիլմերից

- Ֆիլմ «Գիքորը»
- Ֆիլմ «Աշնան արև»
- Ֆիլմ «Դեղին թռնիր»
- Ֆիլմ «Կտոր մը երկինք
- Ֆիլմ «Ճերմակ անուրջներ»
- Ֆիլմ «Զանգեզուր»
- Ֆիլմ «Ռոբինզոն Կրուզո»
- Ֆիլմ «Առանց ընտանիքի»
- Ֆիլմ «Երկրաշարժ»
- Ֆիլմ «Գարեգին Նժդեհ»

Բնագրային աշխատանք

- Հովհ. Թումանյան «Աղքատի պատիվը»
- Հովհ. Թումանյան «Գրազը»
- Հովհ. Թումանյան «Իմ ընկեր Նեսոն»
- Վիլյամ Սարոյան «Լինել ծնված»
- Ալ. Շիրվանզադե «Հրդեհ նավթագործարանում»
- Նար-Դոս «Մի օր, աշնանը»
- Պ. Սևակ «Որդուս»
- Վահան Թեքեյան «Իմ գյուղը»
- Արամ Հովհաննիսյան «Միայնակ զինվոր»

Լսումներ խոսող գրքերից

- Վախթանգ Անանյան «Որսորդի դատաստանը»
- Գեղամ Սարյան «Սերմնացանները»
- Ակսել Բակունց «Մուրոյի զրույցը»
- Լևոն Շանթ «Լեռան աղջիկը»
- Ազատ Վշտունի «Արևելք»
- Արմեն Գուլակյան «Օրեր, մարդիկ անմոռաց»
- Սուրեն Գրիգոր «Սաստկացող անձրևներ»
- Լեռ Կամսար «Անցյալ անկատար տեսակի հայ մը»

Ստեղծագործական աշխատանք

- Պատմվածք երկրաչափական մարմինների մասնակցությամբ՝ «Ժողով եգիպտական բուրգում» վերնագրով:
- Հեքիաթ առնվազն հինգ տիկնիկների մասնակցությամբ՝ «Տիկնիկների վեճը» վերնագրով:
- Բանաստեղծություն շախմատի խաղաքարերի մասնակցությամբ՝ «Սևեր ու սպիտակներ» վերնագրով:
- Հեքիաթ ընտանի կենդանիների մասնակցությամբ՝ «Կենդանական դրախտում» վերնագրով:
- Պատմվածք ծաղիկների մասնակցությամբ՝ «Խատուտիկի դաշտում» վերնագրով:
- Շարադրություն՝ «Խոսքը լսելի է, երբ… » վերնագրով:
- Աքրոստիկոս՝ «Խոսք և հաղորդակցում» բառակապակցությամբ:

Պահանջվող նյութատեխնիկական բազա

Համակարգիչ, համապատասխան գրականություն, գրենական պիտույքներ

Հղումներ և օգտագործված գրականության ցանկ չկա, քանի որ ծրագիրը լիովին հեղինակային է, և օժանդակ աղբյուրներից չեմ օգտվել:

ԽՈՍՔ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ
Թեմա 1. Խոսքը արվեստների թագուհի (10 ժամ)
Նպատակը
Սովորողների շրջանում ձևավորել գիտելիքներ խոսքի տեսակների մասին: Ձևավորել ճիշտ, կապակցված և սահուն խոսք կառուցելու կարողություն: Ներկայացնել լեզվաբանության մեջ խոսքի մշակույթի առանձնահատուկ դերը: Ներմուծել նյութի վերարտադրման համար արդյունավետ մեթոդներ:
Թեմայի վերջնարդյունքները
1. Իմանալ և տարբերակել արդյունավետ հաղորդակցման ձևերը : 2. Կարողանալ կիրառել խոսքի մշակույթի ձևավորման միջոցները: 3. Կարողանալ գրագետ հաղորդակցվել և վերարտադրել իմացածը: 4. Կարողանալ քննարկել որոշումներ, անել եզրահանգումներ: 5. Կարողանալ լսել և ընդունել դիմացինի կարծիքը, անհրաժեշտության դեպքում գնալ փոխզիջման: 6. Կարողանալ աշխատել համակարգչային ծրագրերով:
Բովանդակություն
• Խոսքի մշակույթը որպես լեզվաբանության կարևոր բնագավառ: (1 ժամ) • Գրավոր և բանավոր խոսք: (1 ժամ) • Գրագետ խոսքի կարևորությունը և հաղորդակցական հմտությունների ձևավորման սկզբունքները: (1 ժամ) • Լսելի և ազդեցիկ խոսք կառուցելու միջոցներ: (2 ժամ) • Պարզ լուծումներ, երբ դժվարանում ես վերարտադրել նյութի գաղափարը: (1 ժամ)
Առաջարկվող գործունեության ձևերը և թեմայի բնույթից բխող շեշտադրման ենթակա սկզբունքներ
Հետազոտական աշխատանք, գործնական աշխատանք, գրական ստեղծագործության գրավոր և բանավոր վերլուծություն, քարտերով առաջադրանք՝ խմբերով, թեստային անհատական առաջադրանք, պաստառի պատրաստում, սահիկաշարի պատրաստում:
Միջառարկայական կապեր

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ
Թեմա 2. Դիտում համր ֆիլմերից (20 ժամ)
Նպատակը
Ձևավորել գիտելիքներ մարդկային հոգեբանության, հայ և համաշխարհային գրականության և պատմության մասին, տալ գիտելիքներ երկրաշարժի ժամանակ կողմնորոշվելու մասին: Զարգացնել վերլուծական, քննադատական, ստեղծագործական մտածողությունը և երևակայությունը: Ձևավորել հետաքրքրություն կինոարտադրության նկատմամբ: Ներկայացնել ֆիլմերից այնպիսի հատվածներ (համր), որոնք ցույց կտան որոշակի հոգեվիճակներ, արարքներ, գործողություններ: Բացատրել, թե ինչպես պետք է նկարագրել և բնութագրել համր տեսարանները: Ներմուծել օժանդակ բանալի բառեր տվյալ նյութի ընդլայնված ներկայացման համար:
Թեմայի վերջնարդյունքները
1. Իմանալ և տարբերակել հոգեբանական վիճակները և դրսևորել ճիշտ վարքագիծ մարդկային հարաբերություններում: 2. Կարողանալ կատարել համեմատություններ տարբեր հասարակությունների և ժամանակների միջև, կիրառել ստացած գիտելիքները կյանքում: 3. Կարողանալ ներկայացնել հայ և համաշխարհային գրականության և պատմության հիշարժան դեպքերի մասին տեղեկություններ և գտնել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները: 4. Կարողանալ ճիշտ վերլուծել իրավիճակները, առողջ քննադատել և ստեղծագործել , դրանք փոխանցել հմուտ հաղորդակցման միջոցով:
Բովանդակություն
• Ֆիլմ «Գիքորը» (2 ժամ) • Ֆիլմ «Աշնան արև» (2 ժամ) • Ֆիլմ «Դեղին թոնիր» (2 ժամ)

• Ֆիլմ «Կտոր մը երկինք (2 ժամ) • Ֆիլմ «Ճերմակ անուրջներ» (2 ժամ) • Ֆիլմ «Զանգեզուր» (2 ժամ) • Ֆիլմ «Ռոբինզոն Կրուզո» (2 ժամ) • Ֆիլմ «Առանց ընտանիքի» (2 ժամ) • Ֆիլմ «Երկրաշարժ» (2 ժամ) • Ֆիլմ «Գարեգին Նժդեհ» (2 ժամ)
Առաջարկվող գործունեության ձևերը և թեմայի բնույթից բխող շեշտադրման ենթակա սկզբունքներ
Ֆիլմի (համր) որևէ հատվածի դիտում, բանալի բառերով տեքստերի կազմում, քառաբաժան, Վենի դիագրամ մեթոդների կիրառում, հետազոտական աշխատանք, գործնական աշխատանք, պաստառի պատրաստում:
Միջառարկայական կապեր
Հայ և Համաշխարհային գրականություն, Հայոց պատմություն, Բնագիտություն Վերառարկայական կապեր՝ Հոգեբանություն, Կինո

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ
Թեմա 3. Բնագրային աշխատանք (12 ժամ)
Նպատակը
Ձևավորել գիտելիքներ տարբեր ժամանակների գրականության և տարբեր հասարակությունների կենսակերպի մասին: Ներկայացնել նշված ստեղծագործությունների գրականագիտական արժեքը, հերոսների բնութագիրը: Զարգացնել վերլուծելու, քննադատելու, համեմատություններ կատարելու կարողություն:
Թեմայի Վերջնարդյունքները
1. Իմանալ և տարբերակել դրական և բացասական գծերը մարդու անձնային հատկանիշներում: 2. Կարողանալ կիրառել ստացած գիտելիքները կյանքում: 3. Կարողանալ գրագետ և հիմնավորված վերլուծական, քննադատական խոսք կառուցել:
Բովանդակություն
• Հովհ. Թումանյան «Աղքատի պատիվը» (1 ժամ) • Հովհ. Թումանյան «Գրազը» (1 ժամ) • Հովհ. Թումանյան «Իմ ընկեր Նեսոն» (1 ժամ) • Վիլյամ Սարոյան «Լինել ծնված» (2 ժամ) • Ալ. Շիրվանզադե «Հրդեհ նավթագործարանում» (1 ժամ) • Նար-Դոս «Մի օր, աշնանը» (1 ժամ) • Պ. Սևակ «Որդուս» (2 ժամ) • Վահան Թեքեյան «Իմ գյուղը» (1 ժամ) • Արամ Հովհաննիսյան «Միայնակ զինվոր» (2 ժամ)
Առաջարկվող գործունեության ձևերը և թեմայի բնույթից բխող շեշտադրման ենթակա սկզբունքներ
Վերլուծություն, T-աձև աղյուսակ, նամակի պատրաստում
Միջառարկայական կապեր

Գրականություն, Տեխնոլոգիա

ԸՆԿԱԼՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ
Թեմա 4. Լսումներ խոսող գրքերից (12 ժամ)
Նպատակը
Ներկայացնել նշված հեղինակների ստեղծագործությունների ձայնագրությունը: Ձևավորել լսելու կարողություն, իրենց առջև դրված առաջադրանքների կատարման համար: Ձևավորել հետաքրքրություն գրական ստեղծագործության և դրա մատուցման ձևերի հանդեպ:
Թեմայի վերջնարդյունքները
1. Կարողանալ այս գիտելիքները և կարողությունները կիրառել կյանքում: 2. Կարողանալ ներկայացնել այս ստեղծագործությունների կարդալու և լսելու առանձնահատկություններն ու տարբերությունները:
Բովանդակություն
• Վախթանգ Անանյան «Որսորդի դատաստանը» (2 ժամ) • Գեղամ Սարյան «Սերմնացանները» (1 ժամ) • Ակսել Բակունց «Մուրոյի զրույցը» (1 ժամ) • Լևոն Շանթ «Լեռան աղջիկը» (2 ժամ) • Ազատ Վշտունի «Արևելք» (1 ժամ) • Արմեն Գուլակյան «Օրեր, մարդիկ անմոռաց» (1 ժամ) • Սուրեն Գրիգոր «Սաստկացող անձրևներ» (2 ժամ) • Լեռ Կամսար «Անցյալ անկատար տեսակի հայ մը» (2 ժամ)
Առաջարկվող գործունեության ձևերը և թեմայի բնույթից բխող շեշտադրման ենթակա սկզբունքներ
Վերլուծություն, խմբային աշխատանք
Միջառարկայական կապեր

Գրականություն

ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ՍՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ. ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ
Թեմա 5. Ստեղծագործական աշխատանք (14 ժամ)
Նպատակը
Ներկայացնել երկրաչափական մարմինների, շախմատի խաղաքարերի, տիկնիկների անձնավորման մոտավոր սկզբունքը: Բացատրել պատմվածքի, հեքիաթի, բանաստեղծության, աքրոստիկոսի ժանրային առանձնահատկությունները: Ձևավորել երևակայական մտածողություն երկրաչափական մարմինների մարմնավորման, տիկնիկների մասին: Ներմուծել նոր մեթոդներ ստեղծագործական կարողությունների զարգացման համար:
Թեմայի վերջնարդյունքները
1. Տարբերակել պատմվածքի, հեքիաթի, բանաստեղծության, աքրոստիկոսի ժանրային առանձնահատկությունները: 2. Կարողանալ կիրառել խոսքի մշակույթի ձևավորման արդյունքները հաղորդակցության մեջ: 3. Կարողանալ երևակայել և ստեղծագործել տարբեր բնույթի աշխատանքներ: 4. Կարողանալ քննարկել իրենց իսկ ստեղծագործությունների հերոսների, դեպքերի ու երևույթների կապը գիտության բնագավառների և կյանքի հետ:
Բովանդակություն
• Պատմվածք երկրաչափական մարմինների մասնակցությամբ՝ «Ժողով եգիպտական բուրգում» վերնագրով: (3 ժամ) • Հեքիաթ առնվազն հինգ տիկնիկների մասնակցությամբ՝ «Տիկնիկների վեճը» վերնագրով: (2 ժամ) • Բանաստեղծություն շախմատի խաղաքարերի մասնակցությամբ՝ «Սևեր ու սպիտակներ» վերնագրով: (2 ժամ) • Հեքիաթ ընտանի կենդանիների մասնակցությամբ՝ «Կենդանական դրախտում» վերնագրով: (2 ժամ)

• Պատմվածք ծաղիկների մասնակցությամբ՝ «Խատուտիկի դաշտում» վերնագրով: (2 ժամ) • Շարադրություն՝ «Խոսքը լսելի է, երբ… » վերնագրով: (1 ժամ) • Աքրոստիկոս՝ «Խոսք և հաղորդակցում» բառակապակցությամբ: (2 ժամ)
Առաջարկվող գործունեության ձևերը և թեմայի բնույթից բխող շեշտադրման ենթակա սկզբունքներ
Գրական ստեղծագործությունների հորինում, երկրաչափական մարմինների պատրաստում և դրանցով կերպարի ստեղծում (տալ դեմք և տրամադրություն), տիկնիկների պատրաստում, հետազոտական աշխատանք:
Միջառարկայական կապեր
Երկրաչափություն, Արվեստ, Տեխնոլոգիա, Շախմատ, Կենսաբանություն, Բնագիտություն, Գրականություն